

ՆԵՐԴԻՐ

ՀԻՎԱՆԴԱՆՈՅԸ ԵՐԲԵՔ ՉԻ ԿԱՐՈՂ ՏՈՒՆ ԴԱՌՆԱԼ ... ՈՉ ՌՔԻ ՀԱՄԱՐ

Ամփոփ նկարագրություն

2009 թվականին ՀՔԱ Վա-
նաձորի գրասենյակն իրական-
նացրեց մարդու իրավունքների
մոնիթորինգ ՀՀ նյարդահոգե-
բուժական բուժհաստատություն-
ներում: Մոնիթորինգի արդյուն-
քում արձանագրվեցին ոլորտում
առկա մի շարք համակարգային
խնդիրներ՝ կապված

- դաժան և արժանապատ-
վությունը նվաստացնող
վերաբերմունքի, ներառ-
յալ ֆիզիկական և հոգե-
բանական բռնության հետ
- պատշաճ խնամքի ու
բուժման բացակայու-
թյան հետ
- կյանքի վատ պայման-
ների հետ
- համայնքից մեկու-
սացված, զատված
/segregation/, հասարա-
կական աչքից հեռու լի-
նելու հետ, որի հետևան-
քով չեն ապահովվում
 - համայնքային ներգ-
րավվածությունը
 - անկախ կյանքի վարումը
 - որոշումներ կայացնելու
հնարավորությունները
 - անձի իրավունքների
արդյունավետ պաշտ-
պանությունը:

Դիսպանսերը մի փոքր պետություն
է և ոչինչ չեն կարող փոխել,
որովհետև դրվածքն այսպիսին է. ոչ ոք
ընդհանրապես չի կարող ոչինչ փոխել.
ոչ մի բողոք չի անցնում:

*Սոցիալ-հոգեբանական
հաշմանդամություն ունեցող անձ*

Հիվանդներն ուրիշ ճար չունեն, ստիպված
հաստատության կողմից տրվող սնունդն
են ուտում, թող չզժվեին, բա մենք ինչ
անենք:

Աշխատակից

Հիվանդին ընդունելու ժամանակ,
փոխանակ նրան հարցնեն իր
հոգեվիճակի, հիվանդության
ակունքների մասին, հարազատներին են
հարցնում ու չիմանալով բուն ակունքը՝
բուժում են նշանակում:

*Սոցիալ-հոգեբանական
հաշմանդամություն ունեցող անձ*

Կարդում եմ նամակները, տեսնում եմ, որ
անկապ նամակներ են, հիմնականում ոչ
մի տեղ էլ չեն ուղարկում:

Աշխատակից

Գործող համակարգի պայմաններում

Բռնությունը և վատ վերաբերմունքը հոգեբուժական հաստատություններում

Հոգեբուժական հաստատություններում բարձր են վատ վերաբերմունքի դրսևորման ռիսկերը, քանզի այս հաստատությունները իրենց բնույթով փակ համակարգեր են և դժվար են ենթարկվում հասարակական վերահսկողությանը: Հոգեբուժական հաստատություններում մարդու իրավունքների մոնիթորինգը ցույց է տվել, որ այս հաստատություններում դեռևս առկա են անձանց նկատմամբ նվաստացնող և դաժան վերաբերմունքի դրսևորումները, ներառյալ ֆիզիկական և հոգեբանական բռնությունները, որպես պատժամիջոց զսպման միջոցների կիրառումը, աշխատանքային շահագործումները:

Հոգեբուժարանում գտնվելը անհնարին է դարձնում հիմնարար իրավունքների իրականացումը

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հոգեբուժարաններում ապահովված չեն կյանքի պատշաճ պայմանները, ինչպիսիք են սանիտարահիգիենիկ պայմանները, սննդի որակը և այլն: Ավելին, հաստատությունում ապրելը ինքնըստինքյան հասարակությունից մեկուսացում է ենթադրում: Նման մեկուսացումը չի կարող արդարացվել անձին խնամք կամ բուժում տրամադրելու նպատակով: Իսկ հոգեբուժական հաստատությունում մեկուսանալու հետևանքով անհնար է դառնում անձի կողմից ինքնուրույն կյանք վարելը, որոշումներ կայացնելը: Հաստատությունում կյանքը հանգեցնում է անձի ինքնուրույնության և ունակությունների անկման:

«Կար հարկադիր բուժում ստացող հիվանդ, որը չունի հարազատ, գնալու տեղ, դատարանը չգիտեր՝ ինչ որոշում կայացնել և դուրս չգրեց»

Աշխատակից

Շատ դեպքեր են եղել, որ հիվանդները փախուստի են դիմել: Որպես պատիժ հիվանդներին ֆիքսում են և սրկում:

Աշխատակից

Չի եղել դեպք, որ հիվանդը դուրս գրվելուց հետո իրավաբանի կամ փաստաբանի դիմի: Եթե մարդ կարողանա իրավաբանի, փաստաբանի դիմել, է՛նա դուրս կգրեն, կգնա:

Աշխատակից

Անձը վերոնշյալ հաստատություններում զրկված է որոշում կայացնելու ու ինքնուրույնություն դրսևորելու հնարավորությունից այնպիսի տարրական հարցերում, ինչպիսիք են ինչ ուտել, երբ ուտել, երբ լողանալ, երբ զբոսնել և այլն:

Հոգեբուժարանում գտնվելը նպաստում է խարանի ձևավորմանը

Հոգեբուժական հաստատություններում գտնվելը հանգեցնում է սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խարանի, կարծրատիպերի, խտրական վերաբերմունքի ձևավորմանը:

Այս անձանց նկատմամբ կարծրատիպերի առկայությունը իր հերթին բացասաբար է անդրադառնում նաև նրանց հասարակական կյանքում մասնակցության և ներգրավվածության, ինչպես նաև իրավունքների լիարժեք իրականացման և պաշտպանության վրա:

Պատշաճ խնամքի բացակայությունը

Հայաստանի Հանրապետության համայնքների մեծ մասում բացակայում են հասանելի հոգեբուժական ծառայությունները, ինչի հետևանքով խախտվում է անձանց հոգեբուժական օգնություն ստանալու իրավունքը: Հոգեբուժական հաստատությունները կենտրոնացված են հանրապետության մի քանի համայնքներում և մարդիկ ստիպված են իրենց բնակության վայրից հեռու բուժում ստանում: Անձի բուժումը իր բնակության վայրից հեռու գտնվող հոգեբուժական հաստատությունում նաև նպաստում է հարազատների հետ կապի խզմանը և հասարակությունից մեկուսացմանը:

Իրավական դաշտ - «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա

2010 թվականի սեպտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, որով Հայաստանի Հանրապետությունը ստանձնեց պարտավորություններ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովմանը և պաշտպանությանը:

ՀԶԱ Վանաձորի գրասենյակը կոչ է անում Կառավարությանը Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով իրականացնել ներքոնշյալ բարեփոխումները և միջոցառումները: Սույն փաստաթուղթը մշակվել է՝ հաշվի առնելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան և Եվրոպական խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի «Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներգրավելու մասին» և «Մտավոր

և սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությունը» զեկույցները:

Շարունակվող խախտումներից և վատ վերաբերմունքից պաշտպանելու համար հոգեկան առողջության ոլորտում անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական, կառուցվածքային, կրթական և հասարակական կարծիքի ձևավորմանն ուղղված հետևյալ բարեփոխումները և միջոցառումները.

ՀՐԱՏԱՊ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Որպես հրատապ միջոցառումներ անհրաժեշտ է վերացնել բոլոր հոգեբուժական հաստատություններում վատ վերաբերմունքի դրսևորման դեպքերը և իրականացնել պատշաճ, անկախ, անկողմնակալ, օբյեկտիվ քննություն կատարողներին պատասխանատվության ենթարկելու և հետագա դեպքերը կանխարգելելու նպատակով՝

առանձնահատուկ ուշադրություն դարձնելով

- ✓ անձի նկատմամբ ֆիզիկական, հոգեբանական բռնության ենթարկման դեպքերին,
- ✓ անձի նկատմամբ ֆիզիկական զսպման միջոցների կիրառմանը,
- ✓ անձի նկատմամբ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքին, ներառյալ կյանքի վատ պայմաններին հոգեբուժական հաստատությունում,
- ✓ հոգեբուժական հաստատությունում մահվան դեպքերին:

Անհրաժեշտ բարեփոխումներ

Օրենսդրական բարեփոխումներ

- Հայաստանի Հանրապետության հոգեկան առողջության ոլորտի իրավական ակտերի և միջազգային ստադարտների, մասնավորապես՝ «Հաշմանդամների իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի համեմատական վերլուծության իրականացում և ՀՀ օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների ու լրացումների կատարում
- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացում
- Սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքների խախտումներով զբաղվելու պաշտոնական լիազորությամբ օժտված իրավասու մարմնի ստեղծում

- Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց համայնքային ծառայությունների տրամադրման մեխանիզմների օրենսդրական կարգավորումների մշակում և ընդունում
- Հոգեբուժական ծառայություններից օգտվող և օգտված անձանց, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավում ոլորտում քաղաքականության մշակման և օրենսդրական բարեփոխումների իրականացման գործընթացում
- Սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց համայնքի կյանքին ներգրավելու համար համապատասխան օրենսդրական կարգավորումների մշակում և ընդունում, մասնավորապես ապահովելով հավասար հնարավորություններ կրթության, աշխատանքի, ժամանցի և այլ ոլորտներում:

Կառուցվածքային բարեփոխումներ

- Համայնքապետի ծառայությունների ներդրման համար ռազմավարական ծրագրի մշակում և իրականացում, որի արդյունքում
 - ✓ յուրաքանչյուր անձ իր բնակության վայրում ապահովված կլինի իր կարիքներին համապատասխան անհատական խնամքով և աջակցությամբ,
 - ✓ կապահովվի անձի որոշումներ կայացնելու հնարավորությունը իր բուժման և խնամքի հետ կապված հարցերի վերաբերյալ,
 - ✓ սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձինք իրենց տեղեկացված համաձայնությամբ հոգեբուժական և ընդհանուր բժշկական օգնությունը կստանան մյուսների հետ հավասար պայմաններում՝ ընդհանուր տիպի բժշկական հաստատություններում:

Կրթական բարեփոխումներ

- Համայնքապետի խնամքի և հասարակական աջակցության ապահովման նպատակով անհրաժեշտ ուսումնասիրության իրականացում և դրան համապատասխան մասնագետների պատրաստում, վերապատրաստում:
- Սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց համար կարողությունների զարգացմանն ու ինքնուրույնության բարձ-

րացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում հասարակական կյանքում նրանց լիարժեքորեն ներգրավման նպատակով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր անձի անհատական կարիքները:

Հասարակական կարծիքի ձևավորմանն ու հոգեկան առողջության պահպանմանն ուղղված բարեփոխումներ

- Մարդու իրավունքների դասընթացների կազմակերպում և իրականացում սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչպես նաև բուժաշխատակիցների, սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց խնամք իրականացնողների, հարազատների, լրագրողների, գործատուների համար, որոնք ուղղված կլինեն սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց արժանապատվության, ինքնուրույնության պահպանմանը և կարձագանքեն նրանց կարիքներին:
- Հոգեկան առողջության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խարանի և խտրականության վերացման նպատակով:
- Հոգեկան բարեկեցության ու առողջության և դրա վրա ազդող գործոնների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում քաղաքացիների լայն շերտերի և թիրախ խմբերի շրջանակներում՝ երեխաներ, դեռահասներ, տարեցներ, կանայք, այդ թվում՝ նախաճննդյան և հետճննդյան բժշկական օգնության ընթացքում, թմրամիջոցներից, ալկոհոլից և այլ կախվածություն ունեցող անձինք, տևական բուժում պահանջող կամ մահացու հիվանդություններով տառապող ու նրանց խնամող անձինք և այլն

Հասարակությունը պետք է իրազեկ լինի վերոնշյալ խնդիրների լուծման և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով պետության ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով իրականացված բոլոր միջոցառումների վերաբերյալ: